«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Հայկական ազգային հագուստ -

ԱՌԱՐԿԱ Տեխնոլոգիա 9/20 -

ՀԵՂԻՆԱԿ Հովհաննիսյան Գոհար -

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ << ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի Ցա.Զարոբյանի անվան N 2 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ _____ 1

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ _____ 2

ՀԱԳՈՒՍՏԻ ՄԱՍԻՆ _____ 4

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԶ _____ 7

ՄԱՆԿԱԿԱՆ ՏԱՐԱԶՆԵՐ _____ 12

ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱԿՏԻՎԱՑՆՈՂ ՄԵԹՈԴՆԵՐՈՎ _____ 16

ՄՏՔԻ ՏԱՐԱՓ _____ 17

ՔԱՌԱԲԱԺԱՆ _____ 18

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ _____ 19

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ _____ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շուրջ երեք հազարամյակ տևող ժամանակաշրջանի ընթացքում, Հայաստանում տեղի են ունեցել բնակչության մեծ տեղաշարժեր՝ արտագաղթեր օտար ցեղերի ներխուժումներ և այլն, որոնք անշուշտ, իրենց ազդեցությունն են ունեցել մեր տարազների վրա, սակայն չեն վերացրել նրա ազգային ինքնուրույն նկարագիրը: Հայկական բազմազան տարազաձևերի հենց այդ բնույթը նրան տալիս է պատմականորեն կարևոր նշանակություն. հայ ժողովուրդը հաճախ ներգործուն դեր է կատարել հարևան ժողովուրդների տարազի վրա: Հայկական տարազի վերաբերյալ պատմական հիշատակությունների ամփոփումներով առաջին անգամ հանդես է եկել Ղուկաս Ինճիճյանը: Ալիշանի գործերի մեջ էլ երբեմն հանդիպում ենք զանազան տեղեկությունների: Բայց այդ հարցին նվիրված առաջին լուրջ ուսումնասիրությունը կատարել է Վենետիկի Մխիթարյաններից Վարդան Հացունին, իր «Պատմություն հին հայ տարազին» աշխատությամբ հրապարակված 1923 թվին: Ամենից առաջ հայ տարազի պատմության բոլոր ժամանակաշրջաններում Հայունին գերազանց տեղ է հատկացրել երկրում օտար իշխողների ազդեցություններին, մոռանալով, որ երբեմն օտար տիրապետությունները նույնիսկ ստիպել են հայերին կեցվածքով ու տարազով չնմանվել իրենց, անհանդուրժելի համարելով այդ թե՛ կրոնական, և թե՛ տիրող ժողովրդի իրենց առանձնահատկությունը պահելու տեսակներից: Այդ են ապացուցում նաև արաբ խալիֆների և օսմանյան սուլթանների պարբերաբար արձակած հրովարտակները «գյավուրների» կեցվածքի ու տարազի մասին:

Հացունին աննկատ է թողել նաև հայ–վրացական տարազային առնչությունները, որոնք հետևանք են եղել դարավոր հարևանությամբ, մշակութային, զինվորական և քաղաքական սերտ շփումների, նամանավանդ Բագրատունյաց և Զաքարյանների իշխանության ժամանակաշրջանում:

Տարազի վերաբերյալ որևէ ուսումնասիրություն, առանց փաստական պատկերների, անշուշտ, լիարժեք չի կարելի համարել, ուստի, Հայունին մեծ փութաջանությամբ կարողացել է իր գրքում հավաքել բավականաչափ զննական նյութ:

Հայուն ուսումնասիրությունն ընդգրկում է միայն հին շրջանի տարազը, հասնելով հազիվ մինչև

16–րդ դարը:

ՆՊԱՏԱԿ

1. Տեղեկություններ հայկական տարազի մասին
2. Հայկական տարազի դերն ու նշանակությունը հայ ժողովրդի կյանքում՝ տարբեր ժամանակահատվածներում
3. Հասնել այն բանի, որ մոռացության չտրվեն հայկական տարազի նմուշները
4. Կարողանա տեղափոխել էսքիզը մշակվող նյութի վրա
5. կատարել ավանդական և ժամանակակից տարազի զարդանախշերի էսքիզներ,
6. ԿԱՊԿՈՒ աշակերտներին ցուցաբերել անհատական մոտեցում և առաջադրանքներ տալ ըստ նախատեսված ԱՈՒՊ-ի

ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Աշակերտները կարողանան սահմանել «տարազ» տերմինը
2. Ուսումնասիրել հայ ժողովրդի պատմության տարբեր ժամանակահատվածների և տարբե նահանգներում օգտագործվող տարազները
3. Ստեղծել հայկական տարազների անկյուն
4. փոխել (մեծացնել կամ փոքրացնել) նկարի կամ էսքիզի չափսերը, նախագծել և ասեղնագործել պարզ նմուշներ
5. Կարողանա գեղարվեստական աշխատանքներ կատարել

ՀԱԳՈՒՍՏԻ ՄԱՍԻՆ

Մարդկանց պաշտպանելով ցրտից կամ շոգից՝ հագուստը կատարել է գործնական ֆունկցիա, մարմինը զարդարելով՝ ձեռք է բերել գեղագիտական նշանակություն: Հին ժամանակներում «շրջազգեստ» ասելով հասկանում էին ինչպես տղամարդու, այնպես էլ կնոջ զգեստապահարանի ցանկացած իր: Տարիների ընթացքում փոփոխության ենթարկվեցին ինչպես շրջազգեստ հասկացությունը, այնպես էլ շրջազգեստի համար կիրառվող նյութորն ու ձևերը: Միջին դարերում կանանց շրջազգեստներն ավելի ճոխ և շքեղ տեսք ստացան: Բացի այդ, շրջազգեստները ենթարկվեցին նաև ոճային փոփոխության՝ ի հայտ եկան ժանյակները: Այս ժամանակաշրջանի զգեստները քողարկում էին կնոջ մարմնի թերությունները: Ավելի ուշ կանանց զգեստներում տեղի ունեցան որոշ փոփոխություններ: Հագուստի պատրաստման տեխնոլոգիայի անընդհատ փոփոխումը և զարգացումը կախված է մոդելավորումից, նախագծումից, գործվածքի նոր տեսականուց: Մեքենասարքավորումների բնագավառում կատարվող նորամուծություններից և նորագույն հոսքագծերի ներդրումից:

Անհատական հագուստի պատրաստումը նախատեսված է կոնկրետ կազմվածքի համար: Դրա համար անհրաժեշտ է մանրամասն ծանոթանալ տվյալ մարմնի կազմությանը, տիպային կազմվածքից շեղումներին և յուրահատկություններին: Հագուստի պատրաստումը կապված է մոդելի և գործվածքի ընտրությունից, որից հետո ընտրվում է մոդելը՝ կախված մարդու տարիքից, աշխատանքի բնույթից, հասակից, մազերի, մաշկի և աչքերի գույնից, կազմվածքի առանձնահատկություններից, հագուստի նշանակությունից:

Աշխատանքի սկսվում է ուրվագծի ընտրությունից: Դրա համար պետք է իմանալ մի շարք օրինաչափություններ:

Օրինակ՝ ուղղաձիգ գծերը տեսանելիորեն բարձրացնում են մարդու հասակը, իսկ հորիզոնական գծերը՝ լայնացնում կազմվածքը:

Եթե մարդն ունի կազմվածքային թերություններ, անհրաժեշտ է հագուստի միջոցով դրանք ծածկել՝ ընդգծելով մարմնի առավել գեղեցիկ մասերը:

Հագուստը պատրաստում են հյուսած կամ գործած կտորեղենից, որը մարդիկ հագնում են իրենց մարմինը ծածկելու համար:

Տարբերում ենք հագուստի մի քանի տեսակներ: Վերնազգեստ, վերնաշապիկ, տաբատ, պիջակ, թիկնոց, վերարկու շրջազգեստ, կիսաշրջազգեստ, մուշտակ և այլն:

Հագուստի մեջ առանձնահատուկ տեսակ են՝ գլխարկը, կոշիկը, ձեռնոցը, գուլպան և կիսագուլպան:

Առհասարակ հագուստի մասին խոսելիս տարբեր մարդկանց մոտ տարբեր պատկերացումներ են առաջանում: Այդ հագուստները տարբեր մարդիկ տարբեր ձևերով են նախընտրում: Հետագայում զարգանում է հագուստի մեքենայական արտադրությունը, և այն դառնում է ավելի ժամանակակից: Այն ունի մի քանի առանձնահատկություններ՝ ծածկում է մարդու մերկությունը, նրան պաշտպանում է ցրտից, շոգից, խոնավությունից և այլն, ապահովում որոշակի հիգիենա:

Հագուստի առաջին տարրը եղել է թզի տերևը, որով Ադամն ու Եվան ծածկել են իրենց մերկությունը: Ավելի ուշ օգտագործել են ծառի կեղևը, կենդանական մորթին, ձկան կաշին:

Հագուստի առաջին նմուշները եղել են մորթե թիկնոցները, տրեխները: Դրանից հետո, երբ զարգացավ սպորտը, մարզիկները սկսեցին կրել մարզահագուստներ: Այնուհետև ստեղծվեցին մասնագիտական հագուստները՝ բանվորական, հրշեջի, ոստիկանի, կրոնավորի:

Ուշ քարե դարում հայտնաբերվել են քարե ամրակներ և ոսկրե ասեղներ, որոնցով մշակել ու կարել են մորթին: Նոր քարի դարում մանագործությունը հեղաշրջեց մարդու կենցաղը, հագուստի համար մարդը սկսեց օգտագործել բամբակե, վուշե, բրդե և այլ թելեր:

Զարգացած երկրներում հագուստի ոճն ու ձևվվածքը քիչ են տարբերվում միմյանցից: Դա պայմանավորված է՝ տեխնոլոգիաների աշխարհում տեղի ունեցող փոփոխությամբ: Այս ամենից հետո հագուստը դադարել է ուղղակի զգեստ լինելուց, այն դարձել է նորաձևության միտքը շարժող կարևոր ոլորտ,որով զբաղվում են մոդելագործները: Մոդելագործներն են որոշում, թե ինչպիսին պետք է լինի բոլոր կարգի հագուստները: Ձևն ընտրելիս կարևոր է կտորի խտությունը, տեղի եղանակային պայմանները: Հագուստը մարդու համար ինքնահաստատման ձև է, մշակութային ավանդության ստեղծագործություն:

Մոդելագործի գլխավոր խնդիրը նմուշի ստեղծումն է, որի հիման վրա պատրաստվում են հարյուրավոր և հազարավոր նմուշօրինակ զգեստներ:

Հագուստի նորաձևությունը հագուստի ձևերի և նմուշների փոփոխությունն է, որը տեղի է ունենում կարճ ժամանակամիջոցում: Արվեստի տեսանկյունից նորաձևությունը մոտ է կոնցեպտուալ արվեստին , որը կերպար է ստեղծում տարբեր տարրերով՝ սանրվածք, ոճ, գույն, աքսեսուար: Ընդհանուր առմամբ հագուստը համարվում է անտիկ, իսկ այսօր համարվում է վինտաժային: Սովորաբար ռետրո կամ վինտաժ ոճի հագուստ է համարվում նախորդ դարաշրջանի ոճով նախագծված հագուստը: Վինտաժ ոճի հագուստի չափսերը ավելի փոքր են, քան ժամանակակից հագուստների համապատասխան չափսերը:



1970թ. հագուստը համարվում է միջին չափսի ու կարող է համապատասխանել մեր օրերի չափազանց փոքր (XS) չափսին: Այսպիսով հասկացանք, որ հագուստն ունի շատ հին պատմություն:

Հագուստը փորձվում է մանեկենի վրա: Մեր օրերում շատ հեշտ է, քանի որ հագուստի ոճի մշակմանն օգնում են համակարգիչները, որոնց միջոցով կարելի է որոշել, թե ինչպիսին պետք է լինի նմուշօրինակը և այն փորձարկել համակարգչի ցուցասարքի վրա: Խոշոր ֆաբրիկատներում աշխատանքի հիմնական փուլերը մեքենայացված են: Մեքենաներն են ձևում կտորը, կարում, ապա մշակում կարերը: Երբ հագուստի բոլոր մասերն արդեն կարված են լինում, այն մանրակրկիտ արդուկվում է:

Այնուհետև, վաճառքի ուղարկվելուց առաջ հագուստը մեկ անգամ վերաստուգվում, վերանայվում է:

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԶ

Ինչպես ամեն մի ժողովրդի, հայերի մեջ էլ տարազը սերտ առնչություն է ունեցել նրա պատմական զարգացման հետ: Ուստի անհրաժեշտ է գեթ համառոտ մի ակնարկով ներկայացնել հայ ժողովրդի բազմադարյան պատմության գլխավոր հանգույցները, որոնց արտացոլումն են հանդիսանում հայկական տարազները.

- Ուրարտու– Մեր թվարկությունից առաջ, 9–րդ դարի կեսից, ուրարտացիներն իրենց հզոր պետությամբ հետզհետե լուրջ ախոյան են հանդիսանում Ասորեստանին:

  Ուրարտացիների և ասորեստանցիների տարազներում թեև գտնում ենք որոշ նմանություններ հատկապես վերնախավում, սակայն աշխարհագրական միջավայրը, կլիմայական և էթնիկական տարբերությունները ստիպել են տարբերվել միմյանցից: Հնագիտական պեղումներից հայտնաբերվել են ուրարտական զանազան հուշարձաններ, որոնց վրա պատկերված են աստվածությունների, քրմերի, զինվորականների, պալատականների կերպարները, ինչպես նաև հասարակ ժողովրդի տարազի հազվադեպ նմուշներ, որոնց պիտի անդրադառնանք:

- Հայ ժողովրդի կազմավորման շրջան– Հայկական բարձրավանդակում այդ նույն ժամանակաշրջանում ապրում էին մի քանի մեծ ցեղախմբեր, որոնցից հայասա–ազիները և արիմ–արմե ցեղերը, հետագայում նաև՝ իրենց պետականությունը կորցրած ուրարտացիները, դարերի ընթացքում հետզհետե միաձուլվեցին:

Հայասաների տարազի մասին պատկերացում չունենք, սակայն նրանք դարերով հարևան և դաշնակից լինելով խեթական մեծ ժողովրդի հետ պետք է որոշ նմանություն ունեցած լինեն նրանց հետ: Իսկ Արմենների մասին ունենք պատմական հավաստի հիշատակություններ: Արմենների մասին շատ հետաքրքիր տեղեկություններ է տալիս 5–րդ դարի վերջին (մ.թ.ա) հույն նշանավոր զորավար և պատմագիր Քսենոֆոնը:

Արմենները գտնվելով մարա–պարսկական քաղաքական ոլորտում, որպես նրանց հարևանը, դաշնակիցը, կամ գտնվելով նրանց իշխանության տակ, տարազային ձևերով նման էին միմիանց:

Ստրաբոնը այդ մասին գրում է « Շատ բաներում մարերի և հայերի սովորությունները նման են, որովհետև աշխարհներն էլ նմանվում են միմյանց տարազի խույր, ապարոշ, գտակ, թեզանիքավոր պարեգոտ ու վարտիք՝ ցուրտ և հյուսիսային վայրերի մեջ»:

Մեծ Հայքը՝ Արտաշես Ա–ի, իսկ Ծափքը Զարեհի գլխավորությամբ ապստամբվեցին և դարձան անկախ թագավորություններ: Այդ միասնությունը ավելի ևս ամրապնդվեց Արտաշես Ա–ի հաջորդների՝ հատկապես Տիգրան Բ–ի օրոք, երբ Հայաստանը հանդիսացավ Մերձավոր Արևելքի ամենահզոր պետությունը: Տիգրան Բ–ն տարազի հարցերում ջանացել է պահպանել ազգային ինքնուրույն ձևերը: Դժբախտաբար, այդ ժամանակաշրջանից մեզ չի հասել որևէ հուշարձան, բացի նրա դրամներից, ուր նա պատկերված է ինքնատիպ թագով: Տարազը կեցաղի և մշակույթի՝ ավանդականությամբ բնութագրվող տարրերից է, մարդու ցեղային, սեռային պատկանելիությունը ցույց տվող, հասարակական նշանակությունը բնութագրող խորհրդանիշ:

Ավանդական տարազը կայուն հատկանիշներով արտացոլում է տվյալ էթնոսի մշակութային ինքնատիպությունը ու ազգային խառնվածքի առանձնահատկությունները: Այն կազմված էր ներքնազգեստից, վերնազգեստից և գլխի հարմարանքից, ներառում է ինչպես հագուստը, գլխանոցը, այնպես էլ դրանց ածանցվող արդուզարդը, ինչպես ժողովուրդն է ասում՝ հագուստ–կապուստը:

Հայաստանի տարածքում հնում գործածվող տարազների վերաբերյալ պատկերացում ենք կազմում պեղումների նյութերի, արվեստի հնագույն հուշարձանների վրա պահպանված պատկերներից և գրավոր աղբյուրներից: Մ.թ.ա. IX-VI դդ. Հուշարձաններում (որմնանկարներ, արձաններ, բարձրաքանդակներ, կնիքներ, սաղավարտներ, վահաններ և այլն) պահպանվել են բնակչության բազմազան շերտերի (բարձր խավ, զինվորականներ, քրմեր, հասարակ ժողովուրդ) տարազների պատկեր:

Հայկական տարազի մեջ գերակշռում են չորս տարերքի գույները, որոնք XIV դարի հայ փիլիսոփա Գրիգոր Տաթևացու վկայությամբ՝ արտահայտում են երկրի սևությունը, ջրի սպիտակությունը, օդի կարմիրը և հրո դեղինը: Ծիրանին խորհրդանշում է խոհեմություն և ողջախոհություն, կարմիրը՝ արիություն և մարտիրոսություն, կապույտը՝ երկնավոր արդարություն, սպիտակը՝ մաքրություն:

Տարազային համալիրն իրականացնում է տարբեր գործառույթներ՝ սոցիալական, սեռատարիքային, գեղագիտական, ծիսահրամայական և այլն: Մարդկանց պաշտպանելով ցրտից կամ շոգից՝ հագուստը կատարել է գործնական ֆունկցիա, մարմինը զարդարելով՝ ձեռք է բերել գեղագիտական նշանակություն: Գեղագիտական և էրոտիկ ֆունկցիաները շատ կարևոր դեր են խաղացել տարազի համալիրում, հիմնականում միտում ունենալով գրավել հակառակ սեռի ուշադրությունը: Ժողովուրդը առանձնահատուկ ուշադրություն է դարձրել տարիքային և սեռային որոշակի խմբի հագուստին՝ հատկապես հոգ տանելով չամուսնացած աղջիկների և տղաների, հարսների հագուստ–կապուստին: Տոնածիսական հագուստը ունեցել է հմայական, պահպանական ֆունկցիա՝ նպատակ հետապնդելով զերծ պահել կրողին չար ուժերից:

Հայկական տարազը հայոց բազմաբարբառ լեզվի նման բազմաբնույթ է: Մեկ համահայկական տարազ չկա: Հայաստանի ամեն մի նահանգ աչքի էր ընկնում միայն իրեն յուրահատուկ տարազով, այդ նահանգի յուրաքանչյուր գավառ միայն իրեն բնորոշ զարդանախշերով, գավառի յուրաքանչյուր ընտանիք, այդ ընտանիքի յուրաքանչյուր աղջիկ իր տարազի յուրահատկությամբ տարբերվում էր մյուսից:

Արևմտյան և Արևելյան Հայաստանի տարազի համալիրները տարբերվում են նրանով, որ Արևմտյան Հայաստանում տարազը աչքի էր ընկնում առավել ճոխությամբ, ավելի հարուստ էր ոսկեթել և արծաթաթել ասեղնագործություններով: Մյուս էական տարբերությունն այն էր, որ արևմտյան բոլոր գավառներում գոգնոցը կնոջ տարազի պարտադիր մասն էր: Այն կապում էին գոտկատեղում, կրծքամասում կամ ուսամասում:

Առանձին դիտարկենք Հայաստանի մի քանի շրջաններում տարածված գոգնոցների առանձնահատկությունները:

Բարձր Հայքում գոգնոցը քառանկյունաձև՝ մահուդե, մետաքսե, բրդյա գործվածք էր, որում գերակշռում էր կարմիր գույնը: Վրան պատկերում էին բուսանախշեր և թռչուններ:

Սասունում գոգնոցը կապույտ գույնի բրդյա գործվածք էր, որի վրա բրդյա թելերով ասեղնագործված էին երկրաչափական նախշեր:

Սեբաստիայում գոգնոցի գույնը ունեցել է որոշակի նշանակություն: Շեղանկյուններով զարդարված կարմիր գոգնոցը խորհրդանշել է ամուսնացած կնոջը, աղջիկները այն չեն կրել: Լայն տարածում ուներ կրծքալը, որը կրում էին հագուստի տակից: Այն կրել են Կարինում, Շիրակում, Վասպուրականում, Սասունում, Կարսում, Արդվինում:

Միջնադարյան կնոջ տարազի համալիրը, գլխի հարմարանքը, ի տարբերություն հին հայկական տարազների, ավելի պարզ էր՝ կազմված ծաղկազարդ ճակատակալից: Որպես գլխի ծածկոցներ օգտագործում էին քաղերը, որոնց հանդիպում ենք նաև ուրարտական տարազում: Միջնադարյան կանայք բերանն այնքան ամուր չեն կապել, ինչպես ընդունված էր: Վաղ միջնադարում հայ վերնախավի շրջանակներում նկատելի է ինչպես արաբ, այնպես էլ բյուզանդական տարազների ազդեցությունը: Ուշ միջնադարում հայկական ավանդական տարազը մասամբ ենթարկվել է նաև թուրք, թաթար և քուրդ նվաճողների ազդեցությանը, իսկ մի շարք նահանգներում և գավառներում պահպանվել մինչև XI–րդ դարի վերջը և XX դարի սկիզբը: Այնուհետ հայկական տարազները աստիճանաբար սկսել են տեղի տալ եվրոպական զգեստներին և դուրս մղվել առօրյա գործածությունից:

Տղամարդու տարազը ավելի շուտ է կորցրել ազգային նկարագիրը: Բաղկացած էր երկու հիմնական բաղադրիչներից՝ ուսային (շապիկ, բաճկոն, մուշտակ) և գոտկային (տաբատ, շալվար): Շապիկի օձիքը զարդարում էին ասեղնագործ նախշերով: Հագուստը հիմնականում կրում էին բամբակյա գործվածքից, իսկ արևմտահայերը օգտագործում էին այծի բուրդը: Ավանդական հագուստ էր համարվում չերքիզեն, որը կրում էին շապիկի և բաճկոնի վրայից: Առանց չերքիզեի երևալը հասարակական վայրում նույնիսկ շոգ եղանակին համարվում էր անընդունելի: Ամենատարածված գլխանոցները համարվում էին տարբեր ձևերի գլխարկները, որոնք սովորաբար պատրաստվում էին գառան մորթուց:

Արևմտյան և Արևելյան Հայաստանի տարազը տարբեր էր նաև տղամարդկանց դեպքում: Արևելյան գավառներում տարածված էր կովկասյան տարազաձևը, որը կազմված էր ներքնազգեստից, կարճ վերնազգեստից, չուխայից: Ձմռանը հագնում էին լայն մուշտակ՝ առանց գոտու, գլխին կրում էին գառան կամ ոչխարի մորթուց գլխարկ:

Արևմտահայերի տարազը տարբերվում էր: Այն կազմված էր ասեղնագործ տարրերով տաբատից, կարճ անթև զգեստից, վերնաշապիկից, կարճ վերնազգեստից: Շապիկի թևքերը հարդարվում էին ասեղնագործություններով, մեջքին կապում էին բրդյա գոտի, դնում էին սպիտակ, կոնի ձևով գլխարկներ:

Գուլպան և ոտնամանը հայոց տարազի անբաժան մասն են կազմել, որոնք նաև պաշտպանել են ցրտից: Ուրարտական շրջանում կրել են երկայնակի կամ լայնակի գծանախշերով, երկրաչափական, մարդակերպ, թռչնաձև, շրջանաձև, քառանկյունաձև, խաչաձև նախշերով գուլպաներ:

Կին թե տղամարդ հագել են կաշվե սրածայր ոտնաման՝ տրեխ:

Տարազի կարևոր բաղադրիչ է կազմել զարդը, որն արտահայտել է կրողի գեղագիտական նախասիրությունը: Զարդերի հատուկ խումբ են կազմել հմայելի պարագաները՝ աչքուլունք, հուռութ, խաչեր: Կիրառել են հիվանդություններ բուժելու նպատակով՝ հմայական, ծխական աղոթքների ուղեկցությամբ:

Թեև Արևմտյան և Արևելյան Հայաստանում հայ ավանդական զարդարանքի պարագաները տարբերվել են, բայց ունեցել են որոշ ընդհանրություններ՝ գույնի, ձևի, իմաստաբանության առումով:

ՄԱՆԿԱԿԱՆ ՏԱՐԱԶՆԵՐ

Ինչպես կանացի, այնպես էլ մանկական զգեստները ներկայացնում են ըստ ազգագրական խմբերի, տարիքային առանձնահատկությունների և ֆունկցիաների:

Կարին- Էրզրում- Սեբաստիա- Վան մանկական տարազներ:

Բարձր Հայքի կենտրոն Կարինում հագուստի համալիրուն գործածական էին վերնազգեստի չորս տեսակ, որոնք ունեին միևնույն ձևվածքը, Բարձր Հայքում զգեստները աչքի էին ընկնում իրենց ազգային ինքնատիպությամբ, շքեղությամբ, կտորի տեսակների, գույների համադրությամբ յուրօրինակ արտահայտությամբ: Ամենօրյա և տոնական կամ հարսանեկան զգեստներն ունեին միատեսակ ձևվածք, տարբերությունն արտահայտվում էր շքեղ կամ սովորական զարդարմամբ:

Բարձր Հայքի կենտրոն Կարինում հագուստի համալիրուն գործածական էին վերնազգեստի չորս տեսակ, որոնք ունեին միևնույն ձևվածքը, որոնք տարբերվում էին կտորի որակով և զարդաձևերով: Մահուդից կարված վերնազգեստը կոչվում էր ջուպպա, թավշից կարվածը՝ խրխա, մետաքսիցը՝ ղատիֆա, ֆայ, լահոռ, բրդյա գծավոր կտորից կարվածը՝ փութալի:

Տարածված էր վերնազգեստի հինգ տարբերակ:

- Առաջին տարբերակը կարվում էր մուգ կարմիր, մուգ կանաչ, մանուշակագույն, մուգ կապույտ գույնի մահուդից:
- Երկրորդ տարբերակը առաջինից զատորոշվում էր կողքերում ավելացված հատվածների տեղադրման դիրքով:
- Երրորդ տարբերակը կարվում էր բամբակյա մուգ կապույտ գույնի կտորից՝ առանց ուսակարի, գոտկատեղում կարով: Աջ ու ձախ առաջնամասերի ետևից ավելացվում են յոթ շեղ կտոր, որոնք գոտկատեղում նեղ էին, իսկ դեպի քղանցքը լայնացած:
- Չորրորդ տարբերակի ետնամասը երկու երկայնակի կտորից էր բաղկացած, որոնք միմյանց միանում էին ներսի կարով:
- Վերնազգեստի հինգերորդ տարբերակն ուներ ամբողջական թիկնամաս առջևի աջ ու ձախ փեղկերին զուգահեռ, կողքերում մեկական ամբողջական հատված էր միացվում:

Վան- Արցախ

Լինելով ոսկերչության և արծաթագործության կենտրոն , **Վանում** մանկական տարազի համար ստեղծվում էին անկրկնելի գեղեցկությամբ օժտված ճարմանդներով գոտիներ:

Արցախ տարազը գալիս է դարերի խորքից: Սերունդներն իրար փոխանցելով այն հասցրել են մինչև 20-րդ դարի վերջերը: Այս հագուստը յուրահատուկ ոճ ունի, այն գրեթե զուրկ է որևէ ասեղագործությունից: Արցախի հագուստի թևքերը և թևքերի բերանները զարդակարված էին արծաթե բոժոժներով:

Վասպուրական

Ազգային հագուստը՝ հայկական տարազը, մեր ժողովրդի մտածողության արտացոլանքն է: Արևմտյան Հայաստանում տարազն աչքի էր ընկնում առավել ճոխությամբ ավելի հարուստ էր ոսկեթել և արծաթաթել ասեղնագործություններով: Վասպուրականի շրջանի տարազի հիմնական մասերից էր վերնազգեստը , որը արվում էր մանիսա կտորից:
Հագուստը կազմված է զգեստից, չուխայից, ասեղնագործ գոգնոցից:

Աղջիկների զգեստերի մեջ նույն նպատակի համար գործածական էր հատուկ ծածկոց: Այն քառանկյունաձև էր, որի երկու ծայրերը միմյանց հետ կարելով զցում էին գլխին, իսկ եզրերը հավաքելու համար մյուս երկու ծայրերը բռնում էին առջևում կրծքի վրա:

Կիլիկիայի կանացի զգեստներ

Կիլիկյան երկու սեռի զգեստները ձևավորվել են Հայկական Լեռնաշխարհից այստեղ տեղափոխված տարբեր ազգագրական խմբերի հագուստների խառնուրդից:

Զեյթունում, Սիսում, Հաճնում, Ադանայում, Մարաշում գոյություն ուներ կանացի զգեստի մեկ համալիր՝ բաղկացած սպիտակեղենից, վերնազգեստից, գոտուց, գոգնոցից, գլխի հարդարանքից և ազանելիքից. Ընդ որում համալիրը նույն մասերով թե՛ ամառային էր և թե՛ ձմեռային:

Շապիկը կարում էին կա՛մ սպիտակ գույնի, կա՛մ ներկած կտավից: Երկարությունը հասնում էր մինչև սրունքները, կուրծքը երկար բացվածքով էր: Նույն կտորից էլ կարվում էր վարտիքը:

Տրապիզոնի կանացի զգեստներ՝

Տրապիզոնի տղամարդկանց և կանանց հագուստները ձևավորվել են Հայաստանի տարբեր վայրերից այստեղ հավաքված հայերի ամենատարբեր զգեստների միաձուլումից: Տրապիզոնի կանացի տոնական զգեստներն օժտված էին շքեղ ասեղնագործությամբ:

Կանացի զգեստի համալիրի կարևոր մասերից էր անթարին, որ սովորաբար կարում էին մետաքսյա մանուշակագույն, կանաչ և մուգ կարմիր կտորից. այն ձևվածքով նման էր մյուս գավառների անթարու ձևվածքին:

Կանացի գոտին պատրաստվում էր վանդակավոր կտորից, որի եզրերը զարդարվում էին ծոպերով: Նման գոտիով պատում էին գրեթե ամբողջ կոնքամասը:

Սյունիք-Արցախյան կանացի զգեստներ՝

Սյունաց և Արցախի լեռնագոտիները հնագույն ժամանակներից ի վեր ունեցել են նույն արտաքին տեսքով կանացի զգեստներ, որոնց վերապրուկները պահպանվում են տարեց կանանց շրջաններում:

Սյունիք–Արցախում գոյություն ուներ կանացի տարազի երկու համալիր, որոնք տեղերում անվանում էին հայավարի և քաղաքավարի:

Հայավարին Արցախին հատուկ ավանդական տարազն էր, իսկ քաղաքավարին՝ Երևանի և Թիֆլիսի հայ կանանց տարազի որոշ մասերի ընդօրինակված տարբերակը, որը հատկապես արտահայտվել է գլխի հարդարանքի ձևի մեջ: Քաղաքավարին ազդեցությամբ մուտք գործած լինելով, շուտ է դուրս եկել գործածությունից:

Լոռու կանացի զգեստներ

Լոռու զգեստները նման են Արցախի զգեստներին: 20–րդ դարի սկզբներին Լոռու կանանց զգեստներն ունեին երկու զուգահեռ համալիրներ: Առաջին համալիրում Լոռու և Արցախի զգեստների նմանությունը զգալի է ինչպես սպիտակեղենի, որ արխալուղ անունն է կրում: Կատարյալ նմանություն կա նաև երկու շրջանների քուրք կոչված վերարկուների մեջ:Տարեց կանանց տարազի համալիրում, բացի լեհին կոչված փեշից, գործածական էր նաև երկրորդ տիպի փեշը, որը հագնում էին նախորդի տակից: Այս փեշը նույնպես կարվում էր սև ու կապույտ գույնի սատինից, շեղ ձևված չորս կտորից, որոնք միմյանց միացվում էին ներսի կարով:Գոգնոցը Լոռում ունգուլուկ էր կոչվում: Ինչպես Ապարանում, Կամոյում, Մարտունիում, Վարդենիսում, այստեղ ևս գոգնոցը կարվում էր թոխ լաստիկից. այն շարով կամ նեղ դարսերով հավաքվում էր նույն կտորից կարված գուրու մեջ և ծայրի կապիչներով կապվում ետևում: Գոգնոց կար նաև աղջիկների հագուստի համալիրում, որը սկսած 1940–ական թվականներից վերացավ:

ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱԿՏԻՎԱՑՆՈՂ ՄԵԹՈԴՆԵՐՈՎ

Ինչպես մենք գիտենք այժմ դասապրոցեսները ընթանում են ժամանակակից ակտիվացնող մեթոդներով: Այդ համակարգը կոչվում է ԽԻԿ, որը կազմված է երեք փուլից: ԽԻԿ անվանումը նշանակում է՝ խթանում–իմաստի ընկալում–կշռադատում(փուլերի անվանումների հապավումն է): Այն կիրառվում է ոչ միայն նյութը մատուցելիս, այլև մինչ նյութը հաղորդելը և հաղորդելուց հետո:

Այս համակարգով ուսուցման կազմակերպումը նպաստում է սովորողի քննադատական մտածողության, ինքնուրույն եզրահանգումներ անելու ունակության, ստեղծագործական մտածողության զարգացմանը:

Խթանում

Խթանումը ԽԻԿ համակրգի առաջին փուլն է, որի նպատակն է խմբային քննարկման միջոցով պարզել սովորողների ունեցած գիտելիքները ներկայացվող նյութի վերաբերյալ:

Այն կարելի է իրականացնել օրինակ՝ մտքերի տարափի օգնությամբ, որտեղ ուսուցչի դերը պատասխանները ուղղորդելն է և դրանց գրանցելը: Խթանման փուլը հետապնդում է երեք հիմնական նպատակ.

1. Բացահայտել նոր նյութի վերաբերյալ սովորողների ունեցած գիտելիքները:
2. Ակտիվացնել սովորողներին՝ ներգրավելով նրանցքննարկվելիք նյութի մեջ:
3. Սովորողների մեջ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում, շահագրգռվածություն:

Իմաստի ընկալում

Իմաստի ընկալման փուլում հաղորդվում է նոր նյութը, տեղեկատվությունը կամ գաղափարը: Այն կարող է իրականացվել բազմազան ձևերով:

Իմաստի ընկալման փուլի նպատակներն են՝

1. Սովորողի մոտ հետաքրքրության աճի պահպանումը:
2. Տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը:
3. Նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը:

Օրինակ այս փուլում կարելի է օգտագործել «Խճանկար» մեթոդը, որը կատարվում է փոքր խմբերով:

Կշռադատում

ԽԻԿ համակարգի երրորդ փուլն է կշռադատումը, որում սովորողը յուրացնում է նոր տեղեկատվությունը հարմարացնելով իր ունեցած գիտելիքներին: Փաստորեն սովորողի մոտ տեղի է ունենում իմացական կառույցի վերաձևավորում:

Այս փուլում ևս ուսուցչի դերը նվազագույն է, հիմանանում՝ ուղղորդող, հուշող, կարգավորող բնույթ:

Այս փուլին նպաստող մեթոդների օգտագործումն օգնում է , որպեսզի սովորողը ինքը

1. հանրագումարի բերի իր գիտեիքները
2. յուրացնի նոր գիտելիքներ՝ դրանք դարձնելով իր սեփականը

Կշռադատման փուլում ևս կարելի է կիրառել բազմաթիվ մեթոդներ, կազմակերպել նույն թեմային վերաբերող նկարների ցուցահանդես, պրիզմա, Վենի դիագրամ, Т–ձև, քառաբաժանման մեթոդը ևս:

ՄՏՔԵՐԻ ՏԱՐԱՓ

Մտքերի տարափ կամ մտագրոհ խմբային աշխատանքի պարզագույն, բայց շատ արդյունավետ մեթոդներից է: Այս մեթոդի հեղինակը ամերիկացի գործարար և գյուտարար Ալեքս Օսբորն է, դեռ անցած դարի 30–ական թվականներին նա ուներ գովազդային գործակալություն, որտեղ աշխատում էին տարբեր մասնագիտության, տարբեր սեռի և տարիքի վառ արտահայտված երևակայությամբ մարդիկ, որոնցից պահանջվում էր տարբեր առարկաների գովազդները կազմելիս արտահայտել բազմաթիվ մտքեր, ընդ որում ինչքան շատ, այնքան լավ սկզբունքով:

Այս մեթոդը «Մտքերի տարափ » են անվանում, քանի որ հաճախ խրախուսվում է պարզապես ուսումնասիրվող նյութի հետ այս կամ այն կերպ առնչվող բառեր թվարկելը ու գաղափարներ արտահայտելը:

Խմբի անդամների առջև կոնկրետ խնդիր է դրվում. նրանցից յուրաքանչյուրն արտահայտում է իր սեփական տեսակետը՝ առանց որևէ մեկնաբանության կամ գնահատական տալու փորձի: Բոլոր մտքերն ու գաղափարները գրանցվում են մաքուր

թղթի կամ գրատախտակի վրա: Մտքերի տարափի արդյունքում գրառված գաղափարների վերլուծությունն այս փուլի խնդիրը չէ: «Մտքերի տարափ»–ը մեծապես նպաստում է դասի արդյունավետության բարձրացմանը:



ՔԱՌԱԲԱԺԱՆ

Ի՞նչ լսեցի	Ի՞նչ տեսա
տեղեկություն հայկական տարազի պատմության մասի	տեսանք նկարներ, տեսաֆիլմ, տիկնիկներ տարազներով
Ի՞նչ զգացողություն ունեցա	**Ինչպե՞ս կանվանեի դասը**
հպարտություն, հիացմունք	ազգային ավանդույթ, ազգի հարստություն, ազգի նվաճում

Աշակերտները բաժանվում են 4–5 հոգանոց խմբերի: Խմբերը պատասխանում են հարցերին, յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իրենց պատասխանները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետքրքիր է հայկական տարազի անցած պատմական ճանապարհը, այն հայոց բազմաբարբառ լեզվի նման բազմաբնույթ է: Հայաստանի ամեն մի նահանգ աչքի էր ընկնում միայն իրեն հատուկ տարազով, տվյալ նահանգի յուրաքանչյու գավառ՝ միայն իրեն բնորոշ զարդանախշերով:

Ամփոփելով կատարած հետազոտական աշխատանքը կարելի է անել հետևյալ եզրակացությունները՝

- Հայկական տարազի ծագման և պատմության մասին տեղեկությունները անհրաժեշտ են, որպեսզի սովորողները լավ պատկերացում ունենան ազգային մշակույթի, պատմության մասին:
- ՏՀՏ–ների կիրառումը հայկական տարազներ թեմայի դասավանդման մեջ, դասը դարձնում են հետաքրքրի և հասկանալի:
- Թեմայի դասավանդումը ժամանակակից ակտիվ կրթական մեթոդներով դասը դարձնում են ինտերակտիվ, աշակերտակենտրոն, հետաքրքիր:
- Դասերի ընթացքում, որպես գործնական աշխատանք տիկնիկների համար հայկական տարազի պատրաստումը շատ արդյունավետ է և օգտակար:
- Հայական տարազները այսօր էլ չեն կորցնում իրենց արդիականությունը, հայկական տարազների շատ նախշեր այսօր էլ օգտագործվում են նորաձևության մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Տեխնոլոգիա 6–րդ դասարանի դասագիրք. / Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ.Աղաջանյան, Լ. Վարդանյան;
   –Երեվան- «Տիգրան Մեծ», 2015թ. — 113 էջ
2. «Տեխնոլոգիա» առարկայի հանրակթական դպրոցի ծրագիր և չափորոշիչ, հեղինակներ՝ Սահակ Հովսեփյան, Մայիս Աղաջանյան, Մարինե Բարսեղյան, Երևան. 2012թ. Կ.Ա.Ի.
3. Տեխնոլոգիա 5–7–րդ դասարանների ուսուցչի ձեռնարկ. Սահական Հ, Ա.Հարությունյան,Մ.Աղաջանյան, Լ. Վերդյան: Եր: «Տիգրան Մեծ», 2014 թ. 96 էջ:
4. Հայկական տարազ–հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Ուսումնասիրությունները և նկարները Առաքել Պատրիկի: Խմբագրությամբ՝ Դ.Ս.Վարդումյանի: 1983թ. Երևան, սովետական գրող 2–րդ հրատարակչություն, 200 էջ:
5. https://mihayuhuxosq.wordpress.com
   http://barevarmenia.com
6. Նազիկ Ավագյան՝ «Հայկական ժողովրդական տարազ XIX դ.–ի XX դ. սկիզբ», Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1983
7. Օրացույց «Հայկական տարազներ» 2019թ